Республика Армения ООО
«НАХАГЦЕРИ
ПОРДЗАКННУТЮН»

Republic of Armenia
«NAKHAGTSERI
PORDZAQNNUTYUN» LLC

Հայաստանի Հանրապետություն

«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

N 2-01/23-1

13 . 02.2023թ.

*Լիցենզիա N 17211*

Պատվիրատու՝ Վեդի համայնքի համայնքապետարան

Նախագծային կազմակերպություն՝ « ԻՆՏԵՐ է ն ե ր գ ի ա» ՍՊԸ

ՆԳԾ՝ Թ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման աշխատանքային նախագիծ

Երաշխավորվում է ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման աշխատանքային նախագծի փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 399371.53 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 ալբոմից

Գիրք 0- Ելակետային տվյալներ

Գիրք 1- Ճարտարապետական մաս

Գիրք 2-Կոնստրուկտորական մաս

Գիրք 3-Ինժեներական մաս

Գիրք 4 - Նախահաշիվ

**Ճարտարապետական մաս**

ՀՀ Արարատիի մարզի Վեդի համայնքի, Գոռավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման նախագծի համար հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը:

- անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը
- տեղամասի տեղագրագեոդեզիական հանույթը
- տարածքի համալիր ինժեներաերկրաբանական և երկրաֆիզիկական պայմանները
- ՀՀ գործող շինարարական նորմատիվային պահանջները

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավանավան բնակավայրի Արարատյան1-ին նրբանցք 2/2 հասցեում գտնվող մանկապարտեզի տարածքում:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է ծովի մակարդակից ունի մոտ 925 մ բարձրություն:

Ուսումնասիրվող գոտին համաձայն 'Շինարարական կլիմայաբանության' (ՀՀՇՆ II-7.01-2011)-ի գտնվում է տաք կլիմայական շրջանում: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Օդի միջին ջերմաստիճանը +13C Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ +43C: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -26C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 280-350մմ: Ձյան

ծածկույթի հաստությունը հասնում է 40սմ« իսկ ձյան բեռնվածքի ճնշումը՝ 50կգու/քմ: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը 37սմ է:

՝Ըստ սեյսմիկ հատկության ՀՇՆՆ 20.04.2020թ տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.3g արագացմամբ« 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

Տարածքը գյուղի կենտրոնական մասում է: Տարածքը հարթ է, մոտեցման ճանապարհը անցնում է հարավ-արևմտյան կողմով: Դեպի Մանկապարտեզ մուտքերը նախատեսվում նշված ճանապարհից:

Մանկապարտեզի տարածքը 3000 քմ է: Նախատեսված է 3 խմբի համար: կառուցապատման մակերեսը 412.0 քմ է : Շենքի ընդհանուր մակերեսը 1105.0քմ է:

Նախագծվող շենքը կոնստրուկտիվ առումով սյունահեծանային համակարգով է: Արտաքին պատերը նախատեսված են պեմզաբլոկից: Ծածկերը երկաթբետոնյա միաձույլ սալեր են:

Շենքը վերգետնյա երկհարկանի է, ունի նկուղ: Առաջին հարկում են խոհանոցային բլոկը, տնօրենի և անձնակազմի սենյակները, տնտեսական սենյակները, բուժ. կետը իր մեկուսարանով և Խումբ 1-ը: Յուրաքանչյուր խումբ բաղկացած է հանդերձարանից, խաղասենյակից, խմբասենյակից, բուֆետից և սանհանգույցից, իսկ առաջին հարկում գտնվող խումբը ունի խցիկ հարմարեցված ԲՄԽ համար: Երկրորդ հարկում տեղակայված են 2 և 3 խմբերը:

Նկուղային հարկը ունի 270 քմ ընդհանուր մակերես: Նախատեսված է, որպես ապաստարան ծառայելու: Նախատեսված են երկու մուտքեր շենքի արտաքին կողմից:

Մուտքերից մեկի մոտ տեղադրվելու է ուղղահայաց ամբարձիչ ԲՄԽ համար: Նկուղում նախատեսված են երկու մեծ սրահներ, բուժ. կետ, կապի սենյակ, օժանդակ սենյակներ և տղամարդկանց, կանանց և ԲՄԽ սանհանգույցներ:

Տանիքը նախատեսված է ծածկել հիմնականում մետաղակղմինդրով, փոքր թեքությունները հարթ թիթեղով: Տանիքի ջերմամեկուսացումը կատարվում է 35 սմ հաստ. խարամի շերտով: Ջրահեռացումը արտաքին է՝ հավաքովի դետալներից:նախատեսված են ձնարգելներ և ճաղաշար: Ճակատները և երեսպատվում են տարբեր գույնի բնական քարից սալերով և սվաղվում ու ներկվում են տարբեր գույների ճակատային ներկով համաձայն ճակատային լուծումների: Որմնախարիսխը երեսպատվում է բազալտե 30մմ սալերով, 600 մմ ոչ պակաս բարձրությամբ:

Արտաքին պատերը ջերմամեկուսացվում են բազալտե բամբակի սալերով: Հատակները. խաղասենյակներում և ննջասենյակներում նախատեսված է վինիլային հատակներ, միջանցքներում մամալագրանիտից, սանհանգույցներում և խոհանոցային հատվածներում ինչպես նաև ջերմային հանգույցում՛ խեցեսալ: Պատերի և առաստաղի ներքին հարդարումը. սանհանգույցներում խոհանոցում և բուֆետներում նախատեսված է մասնակի կամ ամբողջական երեսպատում կերամիկական սալիկներով ցեմենտավազային շաղախի վրա, մնացած սենքերը ցաջվում են և ներկվում բարձրորակ լատեքսային ներկերով: Թաց կետերում նախատեսված են 'ԱՐՄՍԹՐՈՆԳ' տիպի կախովի առաստաղներ: Ելնելով ինժեներական գծերի անցկացման առանձնահատկություններից որոշ սենյակներում նախատեսվում են Գիպսաստվարաթղթից կախովի առաստաղներ: Արտաքին դռները այլումինե՝ ջերմակամրջակով:

Տաք ջրամատակարարումը իրականացվելու է արևայի մարտկոցներով, որոնք տեղադրվելու են տանիքին՝ առավելագույնը դեպի հարավ նայող լանջին

Տարածքը բարեկարգվում է; բարեկարգման մակերեսը 1930.0 քմ է: Շենքի շուրջ նախատեսվում է սալվածք բազալտե բրեկչայից՝ եզրագծված բազալտե եզրաքարերով:

Իրականացվում են 4 խաղահրապարակներ (մեկը խաղային կարուսելների համար) ավազի լիցքով: Դեպի խաղահրապարակներ տանող արահետները տրավերտինե կոտրտված քարերից են՝ եզրագծված բետոնե եզրաքարերով՝

ավազե հիմքի վրա: Նախատեսվում է իրականացնել ասֆալտե ավտոճանապարհ: հողատարածքը ցանկապատվում է 1.6 մ բարձրությամբ մետաղյա պրոֆիլներից կազմված հիմնակմախքով, դրոբ ցանցով ցանկապատով:

**Կոնստրուկտորական մաս**

Նախագծի կոնստրուկտորական մասը մշակված է համաձայն ճարտարապետական գծագրերի եվ գործող ՀՀ սեյսմակայուն շինությունների ներկայացվող նորմատիվային փաստաթղթերի պահանջների հիման վրա: Նախագիծը հանդիսանում է նախկինում համալիր փորձաքննության անցած նախագծային թաթեթի տեղակայում:

Կառույցը երկու հարկանի է, նկուղային հարկով հատակագծում ունի բարդ ուրվագիծ: Կառույցը գտնվում է Արարատի մարզի Վեդի համայնքի Եղեգնավան

բնակավայրում, որի բնապայմաններն են՝

ձյան նորմատիվ բեռնվածքը ծածկի վրա -50 կգու/մ²

քամու արագության ճնշումը - 35 կգ / մ²

տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում

հողի սառեցման խորությունը - 37 սմ :

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է միաձույլ երկաթ-բետոնյա շրջանակային հիմնակմախքով:

Հիմնական կրող կոնստրուկտիվ տարրերն ունեն հետյալ պարամետրերը՝.

Հիմքերը -- միաձույլ երկաթբետոնե b25 դ. Ծանր բետոնի փոխխաչվող

հիմնահեծաններ, a500c դասի երկայնական եվ AC-I դասի լայնական ամրաններով,

Սյուները -- 50x50 սմ; 40x40 սմ չափերի միաձույլ երկաթբետոնե

B25 դ. Ծանր բետոնով , A500c դասի երկայնական եվ AC-I դասի լայնական ամրաններով,

Պարզունակները -- 50x55 սմ;40x55 սմ չափերի միաձույլ երկաթբետոնե

B25 դ. Ծանր բետոնով , A500c դասի երկայնական եվ AC-I դասի լայնական ամրաններով,

Ծածկերը -- 18 սմ ; 17 սմ հաստությամբ միաձույլ երկաթ-բետոնյա ՝ ,

Նախատեսված b-25 դասի ծանր բետոնից, A500c դասի կրկնակի ցանցերի ամրանավորումով,

Աստիճանները - միաձույլ երկաթբետոնե սանդղաբազուկներով,

Արտաքին պատերը - 40սմ հաստությամբ կանոնավոր ձևի տուֆե շարվածք

ամրակապված հիմնակմախքի տարրերին,

Միջնորմները - պեմզաբետոնյա սալիկների ամրանավորված շարվածք:

Գրունտի կարգը - III; սեյսմիկ գոտի - I

Գրունտային պայմանների գործակցի արժեքները $k_0$ =1.1

Թույլատրելի վնասվածության գործակիցը $k_1$=0.4;

Պատասխանատվության գործակցը $k_2$=1.3

Կառուցվածքի և հիմնատակի փոխազդեցության գործակցը $k_3$=0.7

Նախագծի տարածական հաշվարկի արդյունքները

Շեղվածքի առավելագույն մեծությունը երկայնական ուղղությունով կազմում է 17.3 մմ < h /170 = 19.4 մմ:

Առավելագույն տեղափոխությունը շենքի տանիքի մակարդակում կազմում է 29.6 մմ:

Շենքի ազատ տատանումների 1-ին ձևի պարբերությունը կազմում է 0.4160 վրկ:

Շենքի ազատ տատանումների 2-րդ ձևի պարբերությունը կազմում է 0.4214 վրկ:

Հաշվարկային բեռնվածքներ

- մշտական՝ կոնստրուկցիաների սեփական քաշը - 523.31 տ

- տանիքային հարկի մշտական բեռնվածքը - 0.130տ/մ$^2$- 585.24 տ

- կարճատեվ ժամանակավոր տանիքային հարկի բեռնվածքը (ձյունից)- 0.100 տ/մ$^2$ - 47.52 տ :

**<u>Ինժեներական մաս</u>**

- կարճատեվ ժամանակավոր տանիքային հարկի բեռնվածքը (ձյունից)- 0.100 տ/մ² - 47.52 տ :

**Ինժեներական մաս**

Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի մանկապարտեզի տաք ջրամատակարարման համակարգի նախագիծն իրականացված է Հ.Հ. օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նախագծման նորմերին և կանոններին, ինչպես նաև նախագծային առաջադրանքին համապատասխան:

Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի նախատեսված է 75 երեխայի համար: Տաք ջրամատակարարման համակագը նախատեսվում է իրականացնել պանելային արևային մարտկոցներով և էլեկտրականությամբ: Արևային մարտկոցների հետ նախատեսվում է տեղադրել ծավալային ջերմափոխանակիչ էլեկտրական ջեռուցիչով 300լ տարողությամբ:

Տաք ջրամատակարարման համակարգը երկկոնտուրանի է: Առաջին կոնտուրում ջերմակիրը անտիֆրիզն է, որը տաքանալով արևային մարտկոցներում պղնձե խողովակներով տեղափոխվում է դեպի դրենաժային բաք (պատրաստման նյութը չժանգոտվող պողպատ կամ պղինձ), այնուհետև պոլիպրոպիլենային ջերմափոխանակիչ խողովակներով դեպի ծավալային

ջերմափոխանակիչ, որտեղ տաքացնում է երկրորդ կոնտուրի սառը ջրին, որը տաքանալով գնում է շրջանառու բաք, որից հետո դեպի սպառիչներ:

Նախագծում նախատեսվում է տեղադրել 3հատ՝ յուրաքանչյուրը 2մԱ մակերեսով արևային պանելային մարտկոցներ:

Հոսանքը կարգավորելու համար նախատեսվում է տեղադրել հոսանքի կարգավորիչ՝ UPS:

Ավտոմատիկան իրականացվում է արևային կարգավորիչի (контроллер) միջոցով:

Համակարգում տեղադրվում է նաև ավտոմատ խառնիչ, որը տաք ջուրը խառնելով սառը ջրի հետ ստանում է համասեռ, միշտ նույն ջերմաստիճանի ջուր:

Ամպամած օրերին, երբ արևային մարտկոցներով հնարավոր չէ իրականացնել տաք ջրամատակարարումը, ավտոմատ միանում է ջերմափոխանակիչի էլեկտրական ջեռոցը:

Գոռավան բնակավայրում կառուցվող մանկապարտեզի էլեկտրական ցանցերի նախագիծը կատարված է ճարտարապետական գծագրերի, հարակից բաժինների առաջադրանքների , ինչպես նաև կձն-ի, հկ 31-110-2003 և ՀՀՇՆ22-03-2017 դրույթների համաձայն:

Տվյալ նախագծի ծավալներում ընդգրկված են՝

- շենքի ներքին ուժային և լուսավորության ցանց
- մուտքային սարքավորումները
- հարկերում տեղադրված ուժային և խմբային վահաններ

Մանկապարտեզի էլեկտրաէներգիայի հիմնական սպառիչներն են՝

- շենքի ներքին լուսավորությունը
- ընդհանուր օդափոխության սարքավորումները
- պոմպակայանը

Պահանջվող հզորությունը կազմում է 79.1կՎտ/93ԿՎԱ:

Ցանցը նախագծված է հետևյալ սխեմայով՝

Նախատեսվում է 0.4ԿՎ լարման սնոխ մալուխը ներանցկացնել նկուղային հարկում գտնվող էլ.վահանային սենյակում տեղակայված փնջային փոխարկիչ /նախատեսված է նաև 2-րդ հեռանկարային 0.4ԿՎ սնման գիծ/ այնուհետև բաշխիչ վանների գծային ավտոմատ անջատիչներից մայրագծերով իրականացվում է բաշխումը համապատասխան վահաններին:

ՈՒՎ1,ՈՒՎ2,ՈՒՎ3,ՕՎ1 -ՈՒժային վահանները

ԼՎ1փԼՎ3 - Հիմնական լուսավորության հարկային վահանակները:

ՎՎ1փՎՎ4 - Վթարային էվակուացիոն և հերթապահ լուսավորության վահանակներ:

Խմբային վահանակների սնող մագիստրալ գծերը նախագծված են ԹԹթվչ-LS մակնիշի մալուխներով, անցկացրած աստիճանաձև մալուխատարով (նկուղում) և տուփախողովակի միջով հարկերում:

Լուսավորությունը իրականացվում է լուսադիոդային LED լուսատուներով:

Լուսատուների քանակը և բնութագրերը ընտրված են համաձայն Հայաստանում գործող ՀՀՇՆ22-03-2017 նորմաների : Մանկապարտեզի նկուղային հարկը նախագծված է այնպես, որ անրաժեժտության դեպքում հնարավոր լինի օգտագործել որպես ապաստարան:

Լուսավորության ցանցը անցկացվում է ПВ3 մակնիշի հաղորդալարերով թաքնված եղանակով օգտագործելով միջպատային և միջհարկային բլոկների դատարկ մասերը, կախովի առաստաղի և սվաղի տակ: Նկուղային հարկում ուժային ցացը իրականացվում է ԹԹթվչ-LS մակնիշի մալուխով անցկացրած բաց աստիճանաձև մալուխատարով և ամրակների տակ: Վարդակային մագիստրալ ցանցի մոնտաժը իրականացվում է 3(1x4)մմ$^2$ հատվածքի հաղորդալարով, ճյուղավորումները ՝ 3(1x2,5)մմ2: Վարդակների խմբերի սնող գծերի վրա նախատեսված են դիֆերենցիալ հոսանքի պաշտպանիչ անջատման սարքեր:

Լուսավորության և վարդակային ցանցի մոնտաժը իրականացվում է չայրվող ճկույն զսպանակավոր (գոֆրե ) խողովակներով:

Գծերը նախատեսված են երեք լար միաֆազ և հինգ լարով եռաֆազ:

Միջպատային և միջհարկային անցումները իրականացնել պլաստիկ Մ32 կոշտ խողովակների միջոցով:

Համաձայն ՀՀՇՆ22-03-17 երեխաների հաճախակի գտնվելու սենյակներում անջատիչները և վարդակները տեղադրվում են 1.8մ

բարձրության վրա ПУЭ 6.6.30: Վահանակները տեղադրվում են հատակից 1.5մ բարձրության վրա բոլոր վահանակները նախատեսված են դռնակներով:

Ապաստարանում նախատեսված է վթարային և էվակուացիոն լուսավորություն ներսարքված մարտկոցով,լուսատուները ընտրված են պաշտպանված: Ապաստարանում անջատիչները և վարդակները տեղադրվում են հատակից 1.5մ բարձության վրա:

Համաձայն СНиП II-II-77 ապաստարանում տեղադրվում է դիզելային կայան որպես սնուցման լրացուցիչ աղբյուր: Դիզելային կայանի միացումը իրականացվում է փոխարկիչի միջոցով ձերքով:

ՀՀ Արարատի Մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման նախագծի ջրամատակարարման , ջրահեռացման համակարգի մասը մշակվել է համաձայն առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի , գործող շինարարական նորմերի :

Ջրամատակարարում և Կոյուղի մասի նախագծում նախատեսվում են ներքին և արտաքին հետևյալ համակարգերը՝

ա. խմելու տնտեսական ջրամատակարարում

բ. կենցաղային կեղտաջրերի կոյուղի

Նախագծային լուծումները ընդունված են համաձայն СНиП 2.04.01-85

Սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն СНиП 3.05.01-85

ԽՄԵԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Ըստ տեխնիկական պայմանի մանկապարտեզի ջրամիացումն իրականացվում մանկապարտեզից հարակից փողոցով անցնող d=110մմ տրամագծի 2,5 մթն ճնշման տակ աշխատող պոլիէթիլենե ջրագծից:

Ոռոգման առվի հետ հատելիս ջրամատակարարման խողովակը անցկացնել մետաղական պատյանի միջով: Ջրամիացման մոտ, նոր կառուցվող ջրամատակարարման հորում, տեղադրվում է փական Մ25 մմ տրամաչափի

ջրաչափական հանգույցով ։ Քանի որ , ջուրը տրվում է համայնքին գրաֆիկով միայն առավոտյան 9,0-։ -12,0 և երեկոյան 17-:-20 այն էլ 1լ/ վրկ առավելագույն ջրաքանակով, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել մանկապարտեզի տարածքում կառուցել 1 հատ ջրամբար՝55 մ3 տարողության և պոմպակայան։

Տարածքի հակահրդեհային անվտանգությունը ապահովելու համար նախատեսվում է հոր՝ հակահրդեհային հիդրանտով։

Ջրամատակարարման արտաքին համակարգը նախատեսվում է իրականացնել 1.20 մ միջին թաղման խորությամբ։ Նախատեսված է մեկ մուտքագիծ։

Մուտքագծի անցքը պատվում է ջրազազանթափանց էլաստիկ նյութով։

ՏՆՏԵՍԱ -ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂԻ (Կ1)

Համակարգը նախատեսված է սանիտարատեխնիկական սարքերից տնտեսա-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար։

Կոյուղու համակարգի խողովակները նախատեսված է իրականացնել ներքինը D63; D110 ,իսկ արտաքինը D160մմ , կոյուղու պոլիվինիլքլորիդե (PVC) լայնուկավոր ՉՃ 21-26-100-80 տրամագծի խողովակներից։

Շենքից կեղտաջրերը հեռացվում են բակ, այնուհետ կայուղու մաքրման կայան, որից հետո կեղտաջրերը հեռացում է մաքրված կեղտաջրերի կուտակման՝ դրենաժային հոր։ Դրենաժային հորում ջրի կուտակվելու դեպքում ասինիզացիոն մեքենայի օգնությամբ կիհեռացվի։

Արտաքին համակարգի համար նախատեսվում է կառուցել 1 դիտահոր։ Կոյուղու համակարգի դիտահորը՝ կլոր կտրվածքի հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից է, սեյսմիկ գոտիների համար նախատեսված լրացուցիչ ամրանների ծախսով։ Կոյուղու համակարգը նախատեսվում է իրականացնել 1,00մ միջին թաղման խորությամբ։

ԿՈՅՈՒՂՈՒ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆ

կոյուղու մաքրման կայանը իրենից ներկայացնում է Ф2100; H=2,4մ/h/ ստորգետնյա, գործարանային արտադրության պոլիպրոպիլենե շիթերից

կոմպլեկտ կառույց: Մաքրման կայանի հատակի բետոնացումը նախատեսվում է իրականացնել B25W6F150դասի բետոնով: Հիմքը 200մմ հաստությամբ միաձույլ ե/բ սալ 4մ : Մաքրման կայանի ծածկը՝ ավազային պաշտպանիչ շերտից է :

1. Մաքրման առաջին ՝ համասեռացման փուլ, որտեղ կատարվում է սկզբնական աէրացիոն և քայքայման ավելի երկար ժամկետ պահանջվող օրգանական նյութերի մարսում:

Հաջորդը՝ աէրացիոն փուլն է, որտեղ կատարվում է բիոլոգիական մաքրում ԹԿՊ և ԹՔՊ-ի նվազեցում մինչև 95% օգտագործելով միկրոդըպջակներ և բիոֆիլտրեր, վերջինները ունեն հիդրավլիկական և մեխանիկական հարվածների նկատմամբ մեծ առավելություն՝ դիմադրություն :

Այս փուլում կատարվում է նաև չնչին քանակությամբ տիղմի ավելացում:

Հաջորդը տիղմի նստեցման փուլն է, որտեղ տիղմը նստելով, ջուրը առանձնանում է և անցնում հաջորդ փուլ, իսկ տիղմը վերադառնում էառաջին փուլ: Պարզեցված ջուրը ինքնահոս հեռանում է դրենաժային հոր:

Պոմպակայանի նախագծի էլեկտրատեխնիկական մասի գծագրերը մշակված են համաձայն ճարտարապետաշինարարական գծագրերի և պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի: Ներքին էլեկտրամատակարարման ցանցի սնուցման համար նախատեսվում է տեղադրել ուժային վահան, որից իրականացվում են էլեկտրաուժային սարքավորումների էլեկտրամատակարարումը և լուսավորության ցանցը:

Ընդհանուր լուսավորության համար նախատեսված է լուսատուների տեղական կառավարում: Վահանակը տեղադրվում է հատակից 1.5մ բարձրության վրա, վարդակները և անջատիչները, 1,5մ բարձրությամբ:

Լուսավորության և խրոցակային վարդակների ցանցը անցկացվում է հրակայուն պղնձե մալուխով, խողովակով, պատի վրա. բաց : Ուժային ցանցի էլեկտրամատակարարման մոնտաժը իրականացվում է նույնպես հրակայուն պղնձե մալուխով,խողովակներով: Ներքին լուսավորության և վարդակների

էլեկտրամատակարարման ցանցը իրականացվում է 3 լարանոց (L,N,PE): Էլեկտրաուժային ցանցը իրականացվում է 5 լարանոց (L1,L2,L3,N,PE):

Նախագծում նախատեսված է ներքին հողանցման կոնտուր, 300մմ բարձրության վրա, որին միանում են էլեկտրասարքավորումների մետաղական իրանները, և որը հողանցվում է արտաքին կոնտուրով: Միացումներն իրականացվում են եռակցումով: Հողանցման կոնտուրի դիմադրությունը չպետք է գերազանցի 4 Օհմը՝ տարվա ցանկացած եղանակին: Հակառակ դեպքում ավելացնել էլեկտրոդներ:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համապատասխան գործող ПУЭ 7-րդ հրատարակչություն:

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրում 75 տեղ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքային նախագծի ջրամատակարարման և ջրահեռացման մասը մշակվել է համաձայն տեխնիկական առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի, գործող շինարարական նորմերի և կանոնների, ինչպես նաև ,,Վեոլա Ջուր,, ընկերության կողմից -թ տրված ԵԼԻՑ -տեխնիկական պայմանի:

Ջրամատակարարում և կոյուղի մասի նախագծում նախատեսվում են հետևյալ համակարգերը՝

ա. խմելու տնտեսական ջրամատակարարում

բ. կենցաղային կեղտաջրերի կոյուղի

Նախագծային լուծումները ընդունված են համաձայն СНиП 2.04.01-85:

Սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն СНиП 3.05.01-85:

ԽՄԵԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Մանկապարտեզի ջրամիացումն իրականացվում մանկապարտեզի հարակից փողոցով անցնող d=63մմ տրամագծի 3 մթն ճնշման տակ աշխատող պոլպատե ջրագծից: Ջրաչափական հանգույցը նախատեսվում է տեղադրել ջրամիացման

կետից մոտ 10մ հեռավորությամբ ՝ սահմանազատման կետում կառուցվող հորում:

Քանի որ , ջուրը տրվում է համայնքին գրաֆիկով միայն առավոտյան 9,0-: -12,0 և երեկոյան 17-:-20, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել մանկապարտեզի տարածքում կառուցել 1 հատ ջրամբար՝ 55 մ3 տարողության և պոմպակայան:

Տարածքի հակահրդեհային անվտանգությունը ապահովելու համար նախատեսվում է հոր՝ հակահրդեհային հիդրանտով: Ջրամատակարարման ներքին ցանցը փակուղային է: Հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է հակահրդեհային ծորակներ: Հատակի միջով անցնող տաք և սառը ջրամատակարարման սպառման խողովակաշարերը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե խողովակներից: Մանկապարտեզի տաք ջրամատակարարումն իրականացվում է երկրորդ հարկի խմբի խոհանոցում նախատեսվող ջերմային հանգույցից :

Ինչպես նաև նախատեսվում են միացման կետեր՝ հետագայում սպացք լվանալու մեքենաներ տեղադրելու համար:

Փախստարանի հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում են կրակմարիչներ:

Փախստարանի համար նախատեսվում է կառուցել ջրի բաք 5,3մ3 տարողության: Ջրի ճնշումը ապահովելու համար նախատեսված է պոմպային տեղակայանք, իսկ ջրի մաքրման համար՝ ֆիլտրեր:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ԿՈՅՈՒՂԻ

Համակարգը նախատեսված է սանիտարատեխնիկական սարքերից տնտեսա-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Կոյուղու ներքին համակարգի խողովակները նախատեսվում է իրականացնել d=110-50մմ տրամագծի կոյուղու պոլիվինիլքլորիդե (PVC) լայնուկավոր խողովակներից ԶՃ 21-26-100-80: Կոյուղու հորիզոնական միացումները կատարվում են թեք ձևավոր մասերով:

Շախտաներում, կոյուղու կանգնակների ստուգիչների դիմաց, նախատեսվում է տեղադրել 30x30սմ չափսերի դռնակներ, ստուգիչների շահագործման համար: Կոյուղու համար նախատեսված է երկու համակարգ՝ 0,00 նիշից բարձր և 0,00 նիշից ցածր: 0,00 նիշից բարձր համակարգը ինքնահոս դուրս են գալիս բակ:

Քանի որ , փախստարանի հատակի նիշը գտնվում է հողի նիշից ցածր, հետևաբար վերջինիս համար նախատեսվել է կոյուղու առանձին համակարգ:

Նախագծում նշված են խողովակների պայմանական անցման տրամագծերը:

Ապաստարանի պատահական հոսքերի հեռացման համար, պոմպակայանի տարածքում կառուցվում է հոր, որում ընկղմված սուզապոմպի միջոցով կեղտաջրերը հեռացվում են բաց տարածք:

Նախահաշիվ

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման : Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները՝

| | |
|---|---|
| - Հիմնական աշխատավարձ | 2.15261 |
| - Մեքենաների շահագործում | 3.3257 |

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 10.2022թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները՝

| | |
|---|---|
| - Նյութերի տեղափոխման ծախսեր | 1,07 |
| - Այլ նյութեր | 1,05 |
| - Պահեստավորման ծախսեր | 1,02 |
| Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել | 233020.0 դրամ |
| Նախահաշվում հաշվարկված է նաև՝ | |
| - Վերադիր ծախսեր | 13,3% |

- Շահույթ 11%

- Ա.Ա.Հ 20%

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը ,Նախագծերի փորձաքննություն ՍՊԸ-ն նշում է , որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան
3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից **«Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ի** փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ է, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:

Փորձագետներ՝ Ա.Հարությունյան

Ս.Թադևոսյան

Ս.Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 17809

(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒ[illegible]ԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության տեսակը)

Տրված է «20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թ.» «ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, Ք. ՎԱՆԱՁՈՐ, ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂ., Շ. 7/23

Գործողության ժամկետը՝ **ԱՆԺԱՄԿԵՏ**

**ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ**
**ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**
*ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ*

(ստորագրությունը)

Կ.Տ.

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ * 02565827 * ԳԵՂԱՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

**ՔՊԼ N 17809 - 12**

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ԳԱԳԻԿ ԼԵՎՈՆԻ ՀԱԽԻՆՅԱՆ AR0260840

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ

(գործունեության ոլորտը)

20.10.2020թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

(ստորագրությունը)

Կ. Տ. 02565827

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

**ՔՊԼ N 17809 - 13**

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԳՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ AH0275158

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍ

(գործունեության ոլորտը)

20.10.2020թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

(ստորագրությունը) — Ա. ԴՈՒԼԱՐՅԱՆ (անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

ՔՊԼ N 17809 - 1

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ԱՐՄԵՆ ՍԱՍՈՒՆԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ AS0571515

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ

(գործունեության ոլորտը)

01.06. 2021թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրությունը)

Կ. Տ

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

# ՔՊԼ N 17809 - 2

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՅԿԱԶԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ AP0499500

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ

(գործունեության ոլորտը)

01. 06. 2021թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրությունը)

Կ. Տ.

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

**ՔՊԼ N 17809 - 4**

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ԱՐՄԵՆ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ AP0624546

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ (ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ)

(գործունեության ոլորտը)

01. 06. 2021թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրությունը)

Կ. Տ

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում